ԱՐԹՈՒՐ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ARTUR MELKONYAN

# ԼԻԲԱՆԱՆԻ ԴՐՈՒԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ 2-ՐԴ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ (1975-1977 ԹԹ.)

1975թ. Լիբանանում բռնկվեց երկրորդ քաղաքացիական պատերազմը, որը մի շարք ներքին ու արտաքին գործոնների արդյունք էր: Այն տևեց շուրջ 15 տարի՝ պատճառելով զգալի մարդկային ու նյութական կորուստներ: Որոշ հետազոտողներ գտնում են, որ երկրում 2-րդ քաղաքացիական պատերազմն ընթացավ 1975-1976 թթ., ապա այն վերածվեց քաղաքական երկարատև ճգնաժամի՝ երկարածգվելով մինչև 1990 թ.:

Քաղաքացիական պատերազմի տարիներին առաջին անգամ «դրուզ» եզրը հայտնվեց ամերիկյան և եվրոպական թերթերի առաջին էջերում[1]:

Երկրի պետական կառավարման հիմքում ընկած կրոնադավանական համակարգով մարոնի համայնքի գերակա դիրքերի նկատմամբ հատկապես լիբանանյան մուսուլմանների շրջանում առաջացան դժգոհություններ: Վերջիններս գտնում էին, որ այդ երկրում ընթացած փոփոխությունները պահանջում էին այդ համակարգի վերանայում և մուսուլմանական՝ այդ թվում նաև դրուզական համայնքների լիազորությունների ընդլայնում:

1970-ական թթ. Լիբանանում խորացող ներքաղաքական ճգնաժամն ու տարբեր խմբավորումների միջև հակասությունների սրումն իրենց ազդեցությունն ունեցան նաև երկրի դրուզական համայնքի վրա, որն իր առաջնորդ Քամալ Ջումբլաթի գլխավորությամբ սկսեց ավելի լայն լիազորություններ պահանջել նաև դրուզական համայնքի համար:

Քաղաքացիական պատերազմը կանխելու նպատակով Պաղեստինի ազատագրության կազմակերպության (ՊԱԿ-ի) ղեկավարությունն արաբական պետությունների ղեկավարներին հղեց նամակներ, որոնցում Լիբանանում իրավիճակի սրման պատասխանատվությունը դրեց «Քաթաիբ» կուսակցության վրա, ինչպես նաև անմիջապես միջամտության կոչ արեց[2]: Պաղեստինցիներին աջակցություն հայտնեցին ձախ ուժերը: Միջնորդական առաքելությամբ Բեյ-

[1] Robert Brenton Betts, The Druze, Yale University Press, London, 1988, p. 108.
[2] Հարությունյան Լ., Լիբաթանը 1958-1990 թվականներին, Եր., 2007, էջ 198:

ռուք ժամանեց ԱՊԼ գլխավոր քարտուղար Մահմուդ Ռիադը[3]: Կրակի դադարեցումը հնարավոր եղավ միայն ապրիլի 16-ին, ինչը, սակայն, չնպաստեց երկրում խաղաղության հաստատմանը: Աջ ուժերի ղեկավարությունն ուժեղացրեց կառավարության նկատմամբ ճնշումները՝ փորձելով ստիպել կարգուկանոն հաստատելու գործընթացում ներգրավել բանակը: Վարչապետ Ռաշիդ Սոլիը մերժեց այդ պահանջը, սակայն կառավարությունից «Քաթաիբ» կուսակցության նախարարների դուրս գալը ստիպեց նրան մայիսի 15-ին հրաժարական տալ: Ռաշիդ Սոլիը երկրում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների պատասխանատվությունը դրեց «Քաթաիբ» կուսակցության վրա[4]:

Լիբանանում բռնկված երկրորդ քաղաքացիական պատերազմի ընթացքում շփումները բավական ակտիվացան Սիրիայում, Լիբանանում և Իսրայելում ապրող դրուզների միջև:

Լիբանանում 2-րդ քաղաքացիական պատերազմի ընթացքում զինված հակամարտությունն ընթանում էր մի կողմից երկրի աջ ուժերի, իսկ մյուս կողմից՝ ծախերի և պաղեստինյան զինված խմբավորումների միջև: Այս ամենի համատեքստում չափազանց կարևոր է ուսումնասիրել դրուզական համայնքի և անձամբ Ջումբլաթի դիրքորոշումը քաղաքացիական պատերազմի նկատմամբ: Դեռևս 1960-ական թթ. վերջերից կառավարամետ աջ ուժերը համախմբվել էին «Լիբանանյան ճակատում», որի ղեկավարն էր երկրի նախկին նախագահ Քամիլ Շամունը, իսկ ճակատի ռազմական ուժերի՝ «Լիբանանյան ուժերի» հրամանատարը՝ Բաշիր Ժմայելը: Այս ճակատի հիմնական ուժերն էին «Լիբանանյան փաղանգներ» (արաբերեն՝ «Հիզբ Ալ քաթաիբ ալ-լուբնանի»), «Ազգային լիբերալ» կուսակցությունը, «Մայրիների պահապաններ» խմբավորումը, մարոնիական լիգան և այլն:

Երկրի ձախ ուժերը միավորվել էին «Ազգային ճակատում», որի ղեկավար մարմինը Կենտրոնական քաղաքական խորհուրդն էր և այն գլխավորում էր Քամալ Ջումբլաթը[5]: Լիբանանի «Ազգային ճակատում» միավորվել էին «Սոցիալիստական առաջադիմական» կուսակցությունը (հիմնականում կազմված էր դրուզներից), «Սիրիական ազգային սոցիալական»

---

[3] The Times, Guide to the Middle East: The Arab World and Its Neighbours, ed. By Peter Sluglett and Marion Farouk-Sluglett, Times Books, London, 1991, pp. 150–151

[4] H. Coban, The Palestian Liberation Organization. People, Power and politics, Cambridge University Press, 1990, p. 70–71.

[5] Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 3, եր., 2006, էջ 640:

կուսակցությունը, սուննիական «Մուրաբիտուն» և այլ ուժեր: Նրանք կազմեցին Ազգային ճակատը[6]:

1976 թ., երբ Սիրիան անմիջականորեն ներգրավվեց լիբանանյան ճգնաժամում, այստեղ տեղակայված սիրիական զորամիավորումների կազմում մեծ թվով սիրիացի դրուզ զինվորներ և սպաներ կապեր հաստատեցին լիբանանյան դրուզական համայնքի հետ, իսկ 1982 թ. Իսրայելի՝ Լիբանան 2-րդ լայնածավալ ներխուժման ընթացքում, իսրայելցի դրուզ զինվորները (իսրայելական զորամիավորումների կազմում) եղան Շուֆի շրջանում, որը հիմնականում դրուզաբնակ է, և առաջին անգամ հանդիպեցին Լիբանանի իրենց հավատակիցներին, ինչի արդյունքում դրուզական համայնքների միջև հաստատված կապերը աշխարհագրական իմաստով ընդգրկեցին Գալիլեայից մինչև Քարմել լեռն ընկած տարածքը[7]:

Դրուզական համայնքի դիրքերի ամրապնդումը տեղի ունեցավ 1960-1970-ական թթ.: Դրուզական գործոնի ուժեղացումն ուղղակիորեն կապված էր Քամալ Ջումբլաթի անվան հետ, ով Լիբանանում երեք տասնամյակ շարունակ դրուզների առաջնորդն էր: Հարկ է նշել, որ Ք. Ջումբլաթը Ռաշիդ Քարամեի հետ 1975 թ. ամռանը ծավալվող դեպքերի ընթացքում մտավ Քամիլ Շամունի կառավարության կազմի մեջ[8], սակայն դա չէր կարող էականորեն փոխել ուժերի հարաբերակցությունը հօգուտ դրուզների, քանի որ մարոնիները պետական կառավարման համակարգում գերակշռող էին:

Լիբանանի դրուզական համայնքը 20-րդ դարի 60-ական թթ. և 1970-ական թթ. սկզբին չնայած երկրում քաղաքական ճգնաժամի խորացմանը, կարողացավ վերածվել կազմակերպված ուժի, որը զգալի դերակատարում ունեցավ լիբանանյան երկարատև ճգնաժամի ողջ ընթացքում: Խոսելով Ջումբլաթի մասին՝ նշենք, որ ժառանգաբար ստանալով դրուզական առաջնորդի կարգավիճակ՝ նա նեղ համայնքային ղեկավարից վերածվեց համալիբանանյան առաջնորդներից մեկի, ով ազդեցիկ դերակատարում ուներ ուսումնասիրվող ժամանակահատվածում Լիբանանում ընթացող զարգացումների վրա[9]: Ուսանելով Ֆրանսիայում՝ նա ծանոթացել էր եվրոպական փիլիսոփաների աշխատություններին: Նրա քաղաքական հայացքներում առանցքային նշանակություն էր տրվում Լիբանանի, բոլոր կրոնաքաղաքական համայնքների միավորմանը, որին, ըստ նրա, հնարավոր էր հասնել արաբական ազգայնական

---

6 Crimes and Massacres by the PLO and the Syrian Army Against the Lebanese People.

7 Kamal Salibi. Crossroads to Civil war: Lebanon 1958-1976, Delmar, New-York, 1976, p. 157.

8 Նույն տեղում, էջ 158:

գաղափարախոսության միջոցով[10]: Իր քաղաքական նպատակներին հասնելու նպատակով՝ 1949թ. Ք. Ջումբլաթը հիմնեց Առաջադիմական-սոցիալիստական կուսակցությունը և սկսեց բացահայտորեն հանդես գալ մարոնիական տիրապետության դեմ: Նա առաջարկում էր վերացնել պետական կառավարման հիմքում դրված կրոնադավանական համակարգը, սահմանափակել օտար պետությունների միջամտությունը և ստեղծել սոցիալական պետություն:

1975 թ. սկզբին արդեն Լիբանանում իրավիճակը ծայրահեղ սրված էր: 1975 թ. հունվարի 12-ին իսրայելցիները հարձակում գործեցին Կֆար-Շուֆա լիբանանյան գյուղի վրա, որտեղ համառ մարտեր տեղի ունեցան պաղեստինցիների հետ[11]: Կֆար-Շուֆի դեպքերը առաջացրին երկրի ձախ շրջանակների դժգոհությունը: Բեյրութում տեղի ունեցան զանգվածային ցույցեր ընդդեմ իսրայելական հարձակման:

1976 թ. հունվարին Բեյրութի Արամուն շրջանում, լիբանանյան մուֆթի Հասան Հալեդի տանը կայացած խորհրդակցությունից հետո, Ջումբլաթը «Ազգային ճակատի» անունից դիմեց Սիրիայի նախագահ Հաֆեզ Ալ-Ասադին՝ օգնության խնդրանքով: Վերջինիս հրամանով, լիբանանյան ձախ ուժերին աջակցություն ցույց տալու նպատակով, սիրիական «Յարմուք» և «Քադիսիա» զինված խմբավորումները մտան Լիբանան:

Սիրիական ուժերի աջակցությամբ երկրի ձախ ուժերին և պաղեստինյան զինված խմբավորումներին հաջողվեց մի շարք ուղղություններով հաջողությունների հասնել աջ ուժերի նկատմամբ և վերահսկողություն հաստատել երկրի զգալի հատվածի նկատմամբ: Երկրի մուսուլմանական սպաները լեյտենանտ Ահմադ Հաթիբի գլխավորությամբ հրաժարվեցին ենթարկվել բանակային վերնախավի հրամաններին և մարտին բանակային զորամիավորումները պարտություն կրեցին: բանակը լքած մուսուլման զինվորները կազմավորում են Լիբանանի արաբական բանակը և միանում են ձախ ուժերին[12]:

Հարկ է ընդգծել, որ Քամալ Ջումբլաթը խուսափում էր պաղեստինյան զինված խմբավորումների հետ ամբողջական համագործակցությունից՝ դրանով իսկ փորձելով խուսափել արաբ-իսրայելական հակամարտության մեջ Լիբանանի ամբողջական ներքաշումից: Ջումբլաթի «զգուշավորության» դեմ հանդես եկավ նաև Սիրիայի նախագահ Հաֆեզ Ալ-Ասադը, ով նշեց, որ «Ջումբ-

---

9 Joumblatt K., I speak for Lebanon, London, 1982, p. 94.

10 Мухиддин А., Друзская община: от имамата аль-Хакима до светского национализма К. Джумблата, 19.11.2009, www. geopolitica.ru/Articles/809/

11 Новейшая история арабских стран Азии и Африки, М., 1988, с. 132.

12 Lebanese Civil War 1975 – 1976, http://www.liberty05.com/civilwar/civil.html

լաթի նպատակը համայնքների միջև նոր հարաբերակցության հաստատումն է և մարոնիների դիրքերի թուլացումը, որոնք ավանդաբար Լիբանանում իշխող դիրքեր ունեին: Կարող ենք ենթադրել, որ Ջումբլաթի պայքարն ամենևին էլ առաջադիմական ուժերի պայքար չէ հետադիմականների նկատմամբ, այլ պարզապես Լիբանանում էթնոդավանական համակարգի վերանայման ու դրա վերացման դեմ դժգոհության արտահայտություն է»[13]:

Այն բանից հետո, երբ Ջումբլաթի և պաղեստինցիների նախաձեռնությամբ, 1976 թ. մարտ-ապրիլ ամիսներին քրիստոնյա մարոնիների համայնքի վրա «արշավանք լեռներում» ռազմական գործողությունն ավարտվեց անհաջողությամբ, Լիբանան մուտք գործեցին սիրիական խաղաղապահ ուժերը, որոնք էլ պարտության մատնեցին դրուզական ու պաղեստինյան զինված ուժերին[14]:

Քամալ Ջումլաթը մինչ վերոհիշյալ անհաջողությունը բացահայտ հայտարարում էր, որ քրիստոնյաների մեկ երրորդը պետք է ոչնչացվի, ևս մեկ երրորդը պետք է լքի երկիրը, և միայն մնացած մասին հնարավոր կլինի իրավունք տալ ապրելու Լիբանանում: ՊԱԿ-ի ղեկավար Յասիր Արաֆաթի տեղակալ Սալահ Հալաֆը հայտարարեց, որ դեպի Պաղեստին տանող ճանապարհն անցնում է քրիստոնեական համայնքի մայրաքաղաք Ջունիեի միջով (Բեյրութի հյուսիս արևելքում գտնվող արվարձան): Երկրի աջ ուժերը հարկադրված են լինում նահանջել մի քանի դիրքերից Արևելյան Բեյրութում և լեռներում, սակայն որոշ ժամանակ անց, իրենց ուժերի վերամիավորումից հետո, աջերն և ոստիկանության զորքերն անցնում են հակագրոհի և հետ շպրտում դրուզական զորքերին մի շարք կենսական տարածքներից, իսկ երկրի հյուսիսում նույնիսկ կարողանում են ներթափանցել այն տարածքները, որոնք գրավվել էին «ՊԱԿ» - ի և ձախ ուժերի զինված խմբավորումները՝ ընդհուպ մոտենալով Լիբանանի մեծությամբ երկրորդ քաղաքին՝ Տրիպոլիին[15]:

Քաղաքացիական պատերազմի առաջին փուլում թերևս 1975 թ. դեկտեմբերի 6-ը ընդունված է համարել «Սև շաբաթ» Լիբանանի պատմության մեջ: Այդ ամենը սկսվեց այն ժամանակ, երբ «Քաթաիբ» կուսակցության առաջնորդ Պիեր Ժմայիլի չորս թիկնապահներին գտան սպանված: Այդ նույն ժամանակ Բեյրութի կենտրոնում՝ Բաբ Իդրիսում, տասնյակ քաթաիբականներ առևանգ-

---

[13] Glass, C. ,The Lord of no Man's land: A Guided Tour Through Lebanon's Ceaseless War, HARPERS, March 2007, pages 47-56. http://www.harpers.org/subjects/Druzes

[14] The Conscience of Lebanon: A Political Biography of Etienne Sakr (Abu-Arz), Mordechai Nisan, Appendix 'Massacres and Crimes committed by the Palestinians and the Syrians Against the Lebanese (1975-90)' p. 154.

ված էին, որոնցից շատերին սպանեցին, իսկ դիակները նույնիսկ հայտնվեցին կուսակցության շտաբի դիմաց: «Սև շաբաթվա» գոհ դարձավ 110 մարդ, իսկ պատանդների թիվը հասնում էր 300-ի[16]:

1976 թ. մի շարք պարտություններից, ապա 1977 թ. Քամալ Ջումբլաթի սպանությունից հետո Լիբանանի «Ազգային ճակատը» կանգնած էր լուրջ մարտահրավերների և նույնիսկ կազմալուծման վտանգի առաջ: Սինչդեռ ճգնաժամի այս փուլում բավական ամուր էին աջ «Լիբանանյան ճակատի» դիրքերը:

Վերլուծելով Ք. Ջումբլաթի և դրուզական համայնքի՝ պատերազմի առաջին փուլին մասնակցության ու դիրքորոշման հետ կապված խնդիրները՝ կարծում ենք, որ 1975-1976 թթ. ընթացքում Լիբանանի ծախ ուժերը, որոնք աջակցություն էին ստանում նաև ԽՍՀՄ-ից, գրեթե հասել էին Լիբանանում արմատական փոփոխություններ կատարելու իրենց նպատակին:

Պետք է նշել, որ թեև Սիրիան Լիբանանյան ճգնաժամում ներքաշվեց ի պաշտպանություն ծախերի, սակայն հետագայում Սիրիան վերանայեց իր դիրքորոշումը: Սիրիան վախենում էր Լիբանանի չափից ավելի ծախացումից և այնտեղ պաղեստինցիների՝ վերահսկողությունից դուրս գալու հեռանկարից: Դա է պատճառը, որ 1976 թ. կեսերից այն սկսեց աջակցություն ցույց տալ երկրի աջ ուժերին:

Սակայն հենց այդ ժամանակ ըստ Սիրիայի և ԱՄՆ-ի միջև կայացած ներքին համաձայնության՝ սիրիական զորքերի մուտքը Լիբանան փոխեց դեպքերի ընթացքն ի վնաս ծախերի, այդ թվում՝ դրուզների: Այս մասին հայտնի արաբագետ Ե. Պրիմակովն իր «Մերձավոր Արևելք. բեմում և ետնաբեմում» գրքում նշում է, որ 1976 թ. ապրիլի 17-ին Քամալ Ջումբլաթի և իր հանդիպման ընթացքում վերջինս նշեց. «Եթե գոնե Սիրիան չեզոքություն պահպաներ, ապա մենք (ծախ ուժերը- Ա.Մ.) 3 ամսվա ընթացքում կգրավեինք իշխանությունը»[17]:

1977 թ. մարտի 16-ին Ք. Ջումբլաթի սպանությունից հետո դրուզական համայնքի ղեկավարումը ստանձնեց նրա որդին՝ Վալիդ Ջումբլաթը: Լիբանանի ծախ ուժերի շրջանում այն կարծիքն էր իշխում, որ Ք. Ջումբլաթի սպանության ետևում կանգնած էին սիրիական հատուկ ծառայությունները: 2005 թ. այս կարծիքն է հայտնել նաև Վալիդ Ջումբլաթը՝ Քամալ Ջումբլաթի որդին, սակայն դա արդեն այն ժամանակ, երբ սիրիական զորքերը դուրս էին բերվել Լիբանանից:

---

[16] Crimes and Massacres By the PLO and the Syrian army against the Lebanese people.

[16] الحرب الأهلية اللبنانية, http://www.yabeyrouth.com/pages/index1480.htm

[17] **Примаков Е.М. Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами (вторая половина XX – начало XXI века). М.: ИИК «Российская газета», 2006, с. 280.**

Դրուզական համայնքի անցած ուղին վերլուծելով՝ կարելի է ասել, որ Քամալ Ջումբլաթի գործունեությունն այս կրոնադավանական համայնքի կյանքում մի նոր փուլ նշանավորեց: Ի ցույց դրվեց, որ նույնիսկ ամենափակ կրոնադավանական համայնքները կարող են մասնակցել երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային զարգացմանը, ներազդելու, իսկ որոշ դեպքերում՝ նույիսկ փոփոխելու այդ զարգացման ընթացքը: Սակայն, Ք. Ջումբլաթի սպանությունը ստիպեց դրուզական համայնքին հրաժարվել իր քաղաքական հավակնություններից: Նշենք, որ Լիբանանի դրուզական համայնքը շատ հարցերում զգալիորեն զիջում էր տեղի մարոնիներին ոչ-միայն քաղաքական, այլ նաև նյութական ռեսուրսների առումով և ի տարբերություն մարոնիների, դրուզները երբեք չէին կարող թույլ տալ իրենց սեփական շահերի պաշտպանության համար գնալ բաց առճակատման: Չնայած դրան՝ դրուզական համայնքը կարողանում էր ժամանակին արձագանքել երկրում տեղի ունեցող ներքաղաքական իրադարձություններին: Որպես ինքնուրույն միավոր՝ դրուզների ազդեցությունը Լիբանանի կյանքում սահմանափակ էր, սակայն տարբեր իրավիճակներում նրանք կարող էին կողմնորոշվել հօգուտ հակամարտող կողմերից մեկի՝ այդպիսով փոխելով ուժերի հարաբերակցությունը՝ դրա դիմաց, իհարկե, պաշտպանելով սեփական համայնքի շահերն ու հետաքրքրությունները: Լիբանանի 2-րդ քաղաքացիական պատերազմի ողջ ընթացքում դրուզները շարունակում էին մնալ «Ազգային ճակատում» և պայքարել կրոնադավանական համակարգի արդիականացման, մուսուլմանների դերի ընդլայնման համար:

**Summary**

The civil war in Lebanon started in April 1975. During the war the Druze community and their leader K. Jumblat entered the rows of National Front. Analyzing the problems concerning participation and position of K. Jumblat and the Druze community in the first phase of the war, we think that during 1975-1976 the National Front of Lebanon, which was also supported by USSR, had almost reached it's aim to make radical changes in Lebanon. But in this very time according to the agreement between Syria and USA, the input of Syrian forces in Lebanon changed the course of events to the detriment of the Druze community and other NF. Despite this, The Druze community of Lebanon went on struggling for their interests.